հորիզոնական թևերի եզրաքարերին ձեռքի քանդակներ են՝ կից մակագրություններով: Թեև երկմտելի, բայց հիշատակված են շինարար վարպետները (Սերգի, Պետրոս) և նրանց գործընկեր գրիչը՝ Գուլխանը, որը նաև քանդակների հեղինակն է:

Եկեղեցին շրջապատված է գերեզմանոցով, ուր, թերևս, թաղումներ են արվել Կյուրիկյանների ժամանակներից ի վեր:

ՈՒՌՈՒՏ

1032. ԽԱՉՔԱՐ. ագուցված գյուղից 2 կմ արևմուտք, XIX դ., վերանորոգված մատուռի հյուսիսային պատին, մի մասը՝ ջարդված, եզրակողին, 1 տող (XIV դ.):



ԿԱՆԿ Ն ԵՑԻ ԽԱՉՍ ԱՐԳՆԱԿԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ:

Ծանոթ. Պատերին ագուցված են մի քանի խաչքարեր ևս:

ՍՎԵՐԴԼՈՎ

Գյուղը հարուստ է վաղ քրիստոնեական հուշարձաններով: Գյուղի կենտրոնում գտնվում է T-ձև հատակագծով վաղ քրիստոնեական մի եկեղեցի, իսկ մոտ 1-1,5 կմ հյուսիս-արևելք կանգնած է խաչաձև հատակագծով, այս տեղին ոչ բնորոշ մեծության կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին, որը մասնագետների կողմից մերթ համարվել է VII դարի եզակի նմուշ,[100] մերթ էլ, ելնելով եռախորան հատակագծային հորինվածքի և դեկորատիվ տարրերի յուրահատկություններից՝ VIդ. առաջին կեսով, որն ավելի հավանական է: Տեղացիների կողմից կոչվում է Դորբանդավանք:

Այս հուշարձանից մոտ 700 մ արևելք գոյություն ունի թաղածածկ մատուռ՝ բավականին խորն ընկած բեմական խորանով և երկու կողմերում տեղավորված ավանդատներով:

Մի թաղածածկ մատուռ էլ գտնվում է գյուղի հյուսիսակողմում, բլուրի վրա՝ բազմաթիվ նորոգումների հետքերով:

Երկու ուշ միջնադարյան արձանագրություններ կան գյուղամիջի հնագույն եկեղեցու վրա:

1033. ԵԿԵՂԵՑԻ. հարավային մուտքի արևելյան որմնասյան խոյակին. 3 տող.

ԵՍ՝ ՈՍԿԱՆ-
Ս ԳՐԵՑԻ Թ-
Վ[ԻՆ] ՌՂ (1641):

---

[100] *С.Х. Мнацаканян.* Об одном неизвестном типе сооружений древнеармянской архитектуры. «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, N 7, էջ 95-106. *Վ. Գրիգորյան,* Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ հուշարձանները, Եր., 1982, էջ 28-29: